

ԱԿՆԱՐԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՄ ՀԱՅԱՊԱՏԿԱՆ ԿՆԻՔ ԿՐՈՂ ՊՂՆՁԵԱՅ ԴԳԱԼՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՏԱՌԱՔԱՂՆԵՐՈՒ

ԱՆԴԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

ՄՈՒՏՔ

Մեր նախորդ ակնարկներով լուսարձակի տակ առած էինք հայկական պղնձագործության զանազան երեսակներ¹: Ստորեւ կը ներկայացնենք հայկական արձանագրութեամբ կամ հայապատկան կնիք կրող պղնձեայ դգալներու եւ պատառաքաղներու նուիրում ակնարկը, զոր շարադրած ենք Միհրան Մինասեանի, Սասուն Սիմոնեանի² եւ Անդրանիկ Տագէսեանի հաւաքածոներուն հիմամբ: Ծնորհակալութիւն կը յայտնենք անոնց երկուքին, որ մեր տրամադրութեան տակ դրին իրենց հաւաքածոն, որուն հիմամբ ալ կարելի եղաւ յառաջացնել նիւթերու բաւարար քանակ մը՝ նման ակնարկի մը համար: Հասկնալի է, որ նիւթը սպառած չենք նկատեր. այս ակնարկը կը նպատակադրէ առաջին քայլերը կատարել հայ պղնձագործութեան այս ենթախումբին ուսումնասիրութեան ուղղութեամբ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՇՈՒՄՆԵՐ

Վերոյիշեալ հաւաքորդներուն քով կարելի չեղաւ գտնել որեւէ դանակի նմուշ, մինչ նոյն դգալ-պատառաքաղներու նմուշներու հանդիպեցանք ա-

¹ Անդրանիկ Տագէսեան, «Յաւելեալ տեղեկութիւններ եւ նորութիւններ հայկական տիւրքներու մասին», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԼԱ:2011, էջ 643-59. նաեւ նոյնի՝ «Յեղասպանութեան զոհ՝ Ուրֆայի պղնձագործութիւնը եւ արիեստագէտ Յակոբ Մաներեան», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԼԵ:2015, էջ 375-98. նաեւ նոյնի՝ «Ֆրունճեան եղբայրներ եւ սրճադասներու ճարտարարուեստը Լիբանանի մէջ (1940ականներ)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԱ:2021, էջ 537-50 «Ակնարկ հայկական արձանագրութեամբ պղնձեայ թասերու վրայ», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԲ/1:2022, էջ 339-50. նաեւ նոյնի՝ «Հայկական պղնձեղէնի Սարգիս Զամպաքեանի հաւաքածոն», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԲ/2:2022, էջ 525-50. նաեւ նոյնի՝ «Ակնարկ հայերէն արձանագրութեամբ բաղնիքի պղնձեայ կաւամաններու վրայ», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԳ/1:2023, էջ 49-70. նաեւ նոյնի՝ «Երեք դիտարկում ԺԸ. Դարակէսի, Վանի եւ Երուսաղէմի հայկական պղնձագործութեան մասին», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԴ/1:2024, էջ 231-40:

² Սասուն Սիմոնեանի նիւթերուն ծանօթացանք 6 Դեկտեմբեր 2023ին, Պէյրութ: Միհրան Մինասեանի նիւթերուն ծանօթացանք 15 Յուլիս, 2024ին, Երեւան: Հաւաքորդներուն քով կային նոյն կնիքը կրող մէկէ աւելի նմուշներ, յաճախ ալ նմուշները կը կրկնուէին այլ հաւաքորդներու քով:

նոնց քով: Դգալ-պատառաքաղները գրեթե ամբողջությամբ մեծ չափի էին, իսկ փոքրաչափ դգալ-պատառաքաղները՝ հազուադեպ:

Մեկնելով առկայ նիւթէն, պէտք է ընդգծել, որ պատառաքաղները նոյնատեսակ են, մանր տարբերութիւններով, բոլորն ալ՝ խոհանոցային օգտագործման: Դգալները, սակայն, կը բաժնուին երկու հիմնական խումբի.- 1) ուտեստի դգալներ, 2) չափումի կլոր դգալներ, որոնք օգտագործուած են դեղարաններու մէջ՝ հեղուկ կամ փոշի դեղի չափը ճշտելու համար:

Նշենք նաեւ թէ, դգալ-պատառաքաղները պատրաստուած են ձուլմամբ, քան թէ՝ կոփումով: Արդարեւ, ի տարբերութիւն պնակներու, գաւաթներու, թասերու, դոյլերու, շերեփներու եւն., դգալ-պատառաքաղը ընդհանրապէս կարելի է անհամեմատ դիւրութեամբ յառաջացնել ձուլման գործընթացով, եւ գրեթե երբեք՝ կոփումով: Յիրափ, այս իրերուն պարագային շատ ակնյայտ են խարտոցումի հետքերը (նաեւ՝ մակերեսներու հազուադէպ մանր ծակոտկէտութիւնը), որոնք յաւելեալ ապացոյց են ձուլման աշխատանքներուն: Պէտք է անելցնել, սակայն, որ դիտարկուած դգալ-պատառաքաղներուն մեծամասնութեան մակերեսը ունի ուշագրաւ ողորկութիւն, սահունութիւն: Անոնք ԺԹ. դարավերջ-Ի. դարակէսի (հաւանաբար մինչեւ 1960ականներ) արտադրութիւններ պէտք է նկատել:



Վերեւի նկար.- Christofle ընկերութեան արտադրութեան դգալ-պատառաքաղներ.
Ներքեւի նկար.- եւրոպական այլ ընկերութիւններու նմուշներ նմանակող դգալը



Այս դգալ-պատառաքաղներէն ոմանց ձեւը, մանաւանդ կոթի բաժնին ձեւաւորումը կը նմանի հանրաժանօթ Christofle ընկերութեան 1880-1950ականներուն արտադրած մէկ նմուշին: Իդէալ, բերանի եւ կոթի միջանկեալ հարթ բաժիններով դգալները եւս կը նմանին նոյն շրջանին, եւրոպական

այլ ընկերություններէ արտադրուած դգալներու: Ըստ երեւոյթին, ընդօրինակում-նմանակում մը եղած է երոպական ձեւերու:

Այստեղ լուսարձակի տակ կ'առնենք միմիայն հայապատկան կնիք կրող դգալ-պատառաքաղները, որոնք ընթեռնելի են, երկու բացառութեամբ³:

ա) Նկարագրութիւն ուրեստի դգալներու⁴

Ասոնք երկու տեսակ են. ոմանց բերանի եւ կոթի միջանկեալ բաժինը խողովակաձեւ է, ոմանցը՝ հարթ:

Հարթ միջանկեալ բաժինով ուրեստի դգալներ.-

- 1) Կոթին աւարտը հարթ է, կոթին եւ վիզին եզերքը՝ թեք հարթութիւն մը ունի, կոնակը միահարթ է, կնիքը՝ اسكان երեսակողմն է: Ան կը տարբերի այս ենթախումբին պատկանող բոլոր միւս դգալներէն իր ձեւով:
- 2) Կոթը կոր աւարտ ունի եւ հորիզոնական շրջագիծ, կնիքը երեսակողմն է (جوج): Թիւ 2-9 կրող դգալները ձեւով նման են իրարու եւ յստակօրէն կը տարբերին թիւ 1 դգալէն:
- 3) Կոթը եւ վիզը հարթ հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ حجيان بدروس երեսակողմն է:
- 4) Կոթը եւ վիզը հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ بدروس երեսակողմն է:
- 5) Կոթը եւ վիզը հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ اوهانيان երեսակողմն է:
- 6) Կոթը եւ վիզը հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը երեսակողմն է (JOZEF):
- 7) Կոթը եւ վիզը հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ BEDROS, երեսակողմն է:
- 8) Կոթը եւ վիզը հորիզոնական շրջագիծ ունին, կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ اسكان سرکيس երեսակողմն է:
- 9) Կոթը հարթ է, նուագ-կոր աւարտով, կնիքը՝ GORG.K, երեսակողմն է:

Խողովակաձեւ միջանկեալ բաժինով ուրեստի դգալներ.-

- 10) Կոթը նուագ-կոր աւարտ ունի, կնիքը՝ اسكان سرکيس երեսակողմն է, ասոր կը նախորդէ դաստակէն մինչեւ ցուցամատը ցոյց տուող երկրորդ մատնանիշ-կնիք մը, ուղղուած անուանակնիքին:
- 11) Կոթը նուագ-կոր աւարտ ունի, կնիքը (جوج د) երեսակողմն է:

³ Որոշ վերապահութեամբ ընդգրկած ենք կնիք մը, որ կը կրէ արաբերէն Նուրի անունը, նկատի առնելով որ ան ծանօթ եւ հայերու կողմէ օգտագործուած շուկայական անուն եղած է: Երկրորդը՝ արաբատառ Ս եւ Շ սկզբնատառերը ունեցող կնիքն է, որուն հայապատկանութիւնը հաւանական կը նկատենք:

⁴ Այս դգալներուն չափագրութիւններուն համար տեսնել՝ կցեալ աղիւսակը:

- 12) Կոթը կոր աւարտ ունի, կոթը հորիզոնական աւարտ ունի, երկու կնիք ունի՝ երեսակողմին, մին՝ մաշած խորհրդանշան մըն է, երկրորդը՝ **AGOP**, անուանակնիքն է:
- 13) Կոթը նուագ-կոր աւարտ ունի, կնիքը՝ اکوب երեսակողմն է:
- 14) Կոթը նուագ-կոր աւարտ ունի, կնիքը՝ مریاتی اکوب երեսակողմն է:
- 15) Կոթը նուագ-կոր աւարտ ունի, կնիքը՝ ارتین երեսակողմն է:
- 16) Կոթը նուագ-կոր աւարտ ունի, կնիքը՝ کره بیت երեսակողմն է:
- 17) Կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ کیورك երեսակողմն է:
- 18) Կոթը նուագ-կոր աւարտ ունի, կնիքը՝ عمل نوري երեսակողմն է:
- 19) Կոթը հարթ է, կնիքը - 2 հատ՝ արաբերէն եւ անգլերէն- ORIGINAL COLOUR, با دريغ կոնակին է:
- 20) Կոթը հորիզոնական մանր բաժանարար գիծ մը ունի, կնիքը - ծեռագիր - (Sahag) երեսակողմն է, ունի նաեւ արծիւ կենդանակերպով կնիք:
- 21) Կոթը հորիզոնական մանր բաժանարար գիծ մը ունի, կնիքը (جمبرجیان) երեսակողմն է:
- 22) Կոթը նուագ-կոր աւարտ ունի, կնիքը՝ **JOZEP⁵**, երեսակողմն է:
- 23) Կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ صرافیان سرکیس երեսակողմն է:
- 24) Կոթը կոր աւարտ ունի, կնիքը՝ اسکان بنیامین երեսակողմն է:
- 25) Կոթը նուագ-կոր աւարտ ունի, կնիքը՝ **BEDROS**, երեսակողմն է:
- 26) Կոթը նուագ-կոր աւարտ ունի, կնիքը՝ بدروس حجیان երեսակողմն է:

Աղիւսակ 1.- Դգալներու չափագրութիւն (սմ.-կր.)							
Բերանի եւ կոթի հարթ միջանկեալ բաժինով դգալներ							
#	Պտ կն.	Կնիք	Մե-տաղ	Կշիռք	հասակ	Բերանի	
						չափ	խորք
1	ՄՄ	اسکان	Դեղ. պղ.	48	19.6	6.5x3.7	
2	ԱՏ	جويج	Դ.Պ.	70	21	7.5x4.5	1.5
3	ՄՄ	بدروس حجیان	Դ.Պ.	40-46	19.6-20	6.3-6,5x3.5-4	
4	ՄՄ	بدروس	Դ.Պ.	52	20,2	7x4.2	
5	ԱՏ	اوهانیان	Դ.Պ.	45	19.6	4x6.6	1
6	ԱՏ, ՄՄ	JOZEF	Դ.Պ.	69	21	4.5x7.5	1.5
7	ՄՄ	BEDROS	Դ.Պ.	44-49	19.4-20	3.4-3.6x6.3-6.8	
8	ՍՍ	اسکان سرکیس	Դ.Պ.	52	19-19.5	4x6.9	
9	ՍՍ	GORG.K	Դ.Պ.	43	19.5	3.5x6.5	

⁵ Այս անուանակնիքին վերջին տառը կրնայ F կամ P ըլլալ:

Բերանի եւ կրթի խողովակաձեւ միջանկեալ բաժինով դգալներ							
10	ԱՏ, ՍՍ	اسكان سرکيس	Դ.Պ.	44-52	19.5-20.1	3.8-4x6.5-6.8	1.3
11	ԱՏ	د جورج	Դ.Պ.	50-60	19.8-20	4.2-4.3x7.2	1.5-1.7
12	ԱՏ	AGOP	Դ.Պ.	71	24.5-25	4.4/4.5x7.1/7.2	1.5-1.7
13	ՄՄ	اکوب	Դ.Պ.	70	19.9	6.5x4	
14	ՄՄ	مرياتي اکوب	Դ.Պ.	46	19.5	7x3.8	
15	ԱՏ	ارتين	Դ.Պ.	46	19.5	3.9x6.7	1.5
16	ԱՏ	کره بيت	Դ.Պ.	55	19.3	3.9x6.9	1.4
17	ԱՏ	کيورک	Դ.Պ.	48	19.3	3.8x6.8	1.2
18	ԱՏ	عمل نوري	Դ.Պ.	44	20.2	4x6.8	1.3
19	ՄՄ	ORIGINAL COLOUR, بادريق	Դ.Պ.	46	18.8	6.5x4	
20	ՄՄ	Sahag	Դ.Պ.	44	19.9	6.2x3.5	
21	ՄՄ	جمبرجيان	Դ.Պ.	50	19.3	6.5x3.6	
22	ՍՍ	JOZEF	Դ.Պ.	45-56	19.5-21	3.8-4.2x6.5-7.2	
23	ՍՍ	صرافيان سرکيس	Դ.Պ.	62	20.1	4x7	
24	ՍՍ	اسكان بنيامين	Դ.Պ.	51	19.5	4x7	
25	ՍՍ ՄՄ	BEDROS	Դ.Պ.	44-49	19-20	3.5-4x6.8-7	
26	ՄՄ	بدروس حجيان	Դ.Պ.	40	19.6	3.5x6.3	

Կնիքներ⁶.-

Դիտարկուող դգալներուն բոլոր կնիքները կրթերուն վրայ են, երբեմն երեսակողմին, երբեմն՝ կոնակը: Չհանդիպեցանք դգալներու որոնք կը կրեն երկու անուանակնիք, կամ կնքուած են թէ՛ երեսակողմին եւ թէ՛ կոնակին:

Դիտարկուող դգալները ունին անգլերէն 4 եւ/կամ արաբերէն 17 կնիքներ⁷, որոնք կը համապատասխանեն - այբէնական կարգով - Արթին, Գէորգ, Ժողէֆ, Իսկէն[եան], Իսկէն[եան] Բենիամին, Իսկէն[եան] Սարգիս, Կարապետ, Ճորճ, Ճորճ Տ., Ճորճ Գ., Չեմպերճեան, [Յ]ակոբ, Միրիաթի [Յ]ակոբ, Նուրի, Պատրիկ, Պետրոս, Պետրոս Հաճեան, Սարաֆեան Սարգիս, Օհանեան անձնանուն-ազգանուններուն⁸:

⁶ Կնիքները կը ներկայացնենք ըստ իրենց գրութեան:

⁷ «جورج» անուանակնիքով երկու տարբեր կնիքներ կան. մին կլոր, միւսը՝ հակաթաձեւ շրջանակի մէջ, որոնք գործածուած են տարբեր ձեւի դգալներու վրայ:

⁸ Ատոնցմէ միջանին կրնան պատկանիլ նոյն արիեստանոցին, ինչպէս՝ Իսկէն եւ Իսկէն/Բենիամին/Սարգիս, Ժողէֆ, Ճորճ, Ճորճ Տ, Ճորճ Գ, Պետրոս եւն. կնիքները: Շատ հաւանական է որ ոչ-հայատառ օտարանուն կնիքը պատկանած ըլլայ հայ պղնձագործի, մանաւանդ որ կ'ենթադրենք որ խնդրոյ առարկայ դգալ-պատառաքաղներուն մեծ մասը արտադրուած է Հալէպի մէջ, ուր յաճախորդներուն մեծա-

ա2) Չափումի դգալներ

Նկարագրություն.-

Դիտարկուող հաաքաճոներուն մէջ այս դգալներուն թիւը երեք է, որոնցմէ մին անկնիք է⁹, երկրորդը ունի արաբերէն Ս. Շ. (س ش) սկզբնատառերով կնիք մը, իսկ երրորդը արաբերէն Աքոպ (اكوب) անուանակնիքը: Այս երեք դգալներն ալ նոյնանման են, կոթը հարթ, վիզը՝ քառակողմ, Աքոպը կնքուած է կոթին կոնակը, իսկ միւս կնիքը՝ երեսակողմը:

Աղիասակ 2.- Կլոր փոս դգալներու չափագրութիւն (սմ.-կր.)						
#	Պտկն.	կնիք	մետաղ	կշիռը	հասակ	Բերանի չափ
1	US	اكوب	Դ.Պ.	48	18.5	5.5
2	US	س ش	Դ.Պ.	53	20	5.8



բ) Պատառաքաղներ

Նկարագրություն.-

Ի տարբերութիւն դգալներուն, դիտարկուող պատառաքաղները միաձեւ են, միայն մէկը փոքրաչափ է: Պէտք է աւելցնել նաեւ, որ ի տարբերութիւն դգալներուն, բոլոր պատառաքաղներուն բերանի եւ կոթի միջանկեալ բաժինը խողովակաձեւ է:

- 1) Կոթը հարթ է, կոր աւարտով, կնիքը՝ سرکيس قناجيان երեսակողմն է:
- 2) Կոթը հարթ է, կոր աւարտով, կնիքը՝ **ՆԱՉԱՐ**, կոնակն է:

մասնութիւնը ոչ-հայ էր, երկրին պետական լեզուն՝ արաբերէնը, որ հաւանաբար պարտադրուած էր հանրային ու շուկայի օգտագործման համար: Հաւանական է նաեւ, որ լատինատառ անուանակնիքները արտադրուած ըլլան մինչեւ ֆրանսական իշխանութեան աւարտը՝ Սուրիոյ մէջ, կամ գոյատեւած ըլլան առաւելագոյնը մինչեւ 1950ականներ, երբ Սուրիան առաւել արաբականացաւ:

⁹ Ասիկա կ'արձանագրենք, որովհետեւ զայն մեզի տուողը յայտնեց թէ իր ծնողքը զայն բերած է Մարաշէն:

- 3) Կոթը հարթ է, կոր աւարտով, կնիքը՝ اسكان سرکيس երեսակողմն է: Կան եւ պատառաքաղներ, որոնց այս կնիքին կը նախորդէ դաստակէն մինչեւ ցուցամատը ցոյց տուող երկրորդ կնիք մը, ուղղուած անուանակնիքին:
- 4) Կոթը հարթ է, կոր աւարտով, կնիքը՝ اسكان بنيامين երեսակողմն է:
- 5) Կոթը հարթ է, կոր աւարտով, կնիքը՝ ADOUR, կոնակին է:
- 6) Փոքր պատառաքաղ, կոթը հարթ է, կոր աւարտով, վիզը խողովակաձեւ է, կոնակին ՀՅԴ զինանշանի դրոշմը կնքուած է:

Կնիքներ¹⁰.-

Պատառաքաղները կ'ընդգրկեն մէկ անգլերէն, մէկ հայերէն եւ երեք արաբերէն անուանակնիքներ: Հետեւաբար, այբէնական կարգով, վերոյիշեալ պատառաքաղներուն վրայ ունինք Ատուր, Իսկէն[եան] Բենիամին, Իսկէն[եան] Սարգիս, Գնաճեան Սարգիս եւ Նազար կնիքները:

Աղյուսակ 3.- Պատառաքաղներու չափագրութիւն (սմ.-կր.)						
#	Պտ կն.	Կշիռք	Կնիք-գրութիւն	Մետաղ	Երկայնք	Բերանի չափեր
1	ՍՍ		قناجيان سرکيس ¹¹	Դ.Պ.	37-41	18.8-19
2	ՄՄ	50	ՆԱԶԱՐ	Դ.Պ.	20.1	6.5x 2.2
3	ՄՄ, ԱՏ	36-37	اسكان سرکيس	Դ.Պ.	18.7-19.6	2-2.2-6-6.5
4	ՄՄ	40	اسكان بنيامين	Դ.Պ.	19.2-19.4	6x 2.2-2.4
5	ԱՏ	31-33	ADOUR	Դ.Պ.	18.7	2.3/2.4-5.9-6
6	ՄՄ	18	ՀՅԴ զինանշան	Դ.Պ.	12	4.2x1.9



Կիւրկ-Գէորգ

¹⁰ Կնիքները կը ներկայացնենք ըստ իրենց գրութեան:

¹¹ Սիմոնեան վերապահ է այս կնիքին «قناجيان» ընթերցման:



ADOUR-Ատուր



ارتين-Արթին



ՆԱԶԱՐ



بادريق-Պատրիկ



Sahag-Սահակ



Կարապետ-Կրե Բիտ



Օհանեսան-Օհանյան



Նուրի (ամալ՝ գործ)-عمل نوري



ՇԱ-Ս Տ



Ճեմապերճեան - յիմարիան



Ակոր [3]-AGOP



S-ճորճ-ճ



Գ ճորճ-GORG.K



ճորճ-ճ



Քանաջիան Տարգիս



BEDROS-Պետրոս



Պետրոս-Բեդրոս



Հանեան-Բեդրոս Կաջիան



JOZEF/P-ժողով



اسكان بنیامین - Բենիամինի իսկէն



اسکان-հսկէն



اسکان سرکيس - հսկէն Սարգիս



اسكان سرکيس - Իսկէն Սարգիս



صرافيان سرکيس - Սարաֆեան Սարգիս



ՀՅԴ զինանշանի դրոշմը

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Մեկնելով ի ձեռի ունեցած մեր նիւթերէն, կարելի է եզրակացնել, թէ հայկական արձանագրութեամբ կամ հայապատկան կնիք կրող պղնձեայ դգալներ-պատառաքաղները.-

- 1) Ձուլման քան թէ պղնձակոփումի արդիւնք են.
- 2) Յարդ անգտանելի են դանակներ.
- 3) Մեծ ու փոքր չափի դգալ-պատառաքաղներէ բացի, գոյութիւն ունին նաեւ կլոր դգաներ, որոնք օգտագործուած են դեղարաններու մէջ՝ հեղուկ կամ փոշի դելի չափ ճշտելու համար.
- 4) Դգալ-պատառաքաղներուն մեծամասնութիւնը հաւանաբար ԺԹ. դարավերջ--Ի. դարակէսի (հաւանաբար մինչեւ 1960ականներ) արտադրութիւններ են.: Անոնց վրայ թուական կամ վայր նշուած չէ:
- 5) Ասոնք ունին հետեւեալ հայերէն, անգլերէն եւ արաբերէն անուանակնիքները.- Ատուր, Արթին, Գէորգ, Գնաճեան Սարգիս, Ժողէֆ, Իսկէն, Իսկէն[եան] Բենիամին, Իսկէն[եան] Սարգիս, Կարապետ, Ճորճ, Ճորճ Տ., Ճորճ Գ., Չեմպերճեան, [Յ]ակոբ, Միրիաթի [Յ]ակոբ, Նազար, Նուրի, Պատրիկ, Պետրոս Հաճեան, Ս. Շ., Սարաֆեան Սարգիս, Օհանեան:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Ճիշտ է որ ուղղակիօրէն չեն առնչուիր նիւթին, յամենայնդէպս մասնակիօրէն կապ ունենալուն համար այստեղ կը ներկայացնենք արծաթեայ փոքրաչափ դգալ մը եւ պատառաքաղ մը, իրենց իւրայատկութեան համար: Ասոնք իրենց կոթին կոնակին կը կրեն հայերէն նոյն սկզբնատառերը՝ Բ եւ Ի: Պատառաքաղը (20.8 կրամ) ունի 12.5, իսկ դգալը (22.1 կրամ) 11.5 սմ. հասակ: Դգալը ոճաւորուած է: Երկուքն ալ նկարազարդուած են: Նկարները ենթադրել կու տան որ Եգիպտոսի կամ Իրաքի հայ արծաթագործ վարպետի մը գործը ըլլան:





A SURVEY OF ARMENIAN COPPER FORKS AND SPOONS (SUMMARY)

ANTRANIK DAKESSIAN
adakessian@haigazian.edu.lb

The study focuses on the diverse forms of copper forks and spoons, which have Armenian inscriptions or have Armenian names inscribed in Arabic or Latin letters. Unlike copper bath tassels, tassels used for clay, plates, or *divits*, the forks and spoons are molded rather than hammered and shaped by hand. And unlike the above-mentioned utensils, none of these have any dates or any data that hint at their provenance. The author notes that no knives with such inscriptions have been found yet, though surely the craftsmen produced knives as well.

Basing his analysis on an extensive collection of forks and spoons that belong to three antique collectors, the author has been able to discern 29 different inscriptions, of which 21 are found on the spoons, 6 on the forks and 2 on rounded spoons (used by chemists for measurement). Certain inscriptions are found both on spoons and forks as well.

Most of the inscriptions are in Arabic letters, a few are in Latin script and one is in Armenian. Most of the inscriptions bear only the first name of the craftsman, though some have the family name too.

The author lists the names inscribed on these utensils: ADOUR, [H]AGOP, [H]Akob, [H]Akob Miryati, Artin, Badrik, BEDROS, Bedros Hadjian, Garabed, George, George D., GORG.K, Isken[ian], Isken[ian] Peniamin, Isken[ian] Sarkis, Jemberjian, JOZEP, Jozef, Kevork, Nazar, Sahag, Kenadjian Sarkis, Nazar, Nouri, Ohanian, Sarafian Sarkis, and a stamp with the initials S and Sh.